Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական
խորհրդի 2024թ. օգոստոսի 23-ի
N 1-08/24/10 որոշմամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝
Ն.Ա.Միքայելյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ Ուսխորհուրդ) ինքնակառավարվող, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը Քոլեջի կառավարման մարմիններում, քննարկման է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր:

1.2. Ուսխորհուրդի լիազորություններն ու գործունեությունը, ՀՀ օրենսդրությանը և կանոնադրական ակտերին համապատասխան, սահմանվում են Քոլեջի ղեկավար մարմինների որոշումներով, ինչպես նաև սույն Կանոնակարգով:

1.3. Ուսխորհուրդն ապահովում է Քոլեջի ուսանողական ինքնակառավարման գործընթացները Քոլեջի ուսանողների շրջանում և պաշտպանում է վերջիններիս շահերը:

1.4. Քոլեջի կառավարման մարմինների, նրանց ստորաբաժանումների, Քոլեջում գործող, ինչպես նաև արտաքոլեջային կրթական, մշակութային, հոգևոր, բարեգործական և այլ կազմակերպությունների, պետական մարմինների և անհատ անձանց հետ Խորհրդի հարաբերություններն իրականացվում են Համալսարանի կանոնադրության և սույն կանոնակարգին համապատասխան:

1.5. Սույն կանոնակարգը հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

1.6. Ուսխորհուրդը կարող է ունենալ իր խորհրդանիշը, որի տեսքը հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի նիստի կողմից, նրա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

1.7. Ուսխորհրդի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրերն օրինական ուժ են ստանում Համալսարանի կնիքով և ռեկտորի ստորագրությամբ վավերացվելուց հետո:

2. ՈՒՍԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Ուսխորհրդի հիմնական նպատակն՝ ուսուցման կազմակերպման ու կրթության որակի ապահովման գործում և հասարակական կյանքում Քոլեջի սովորողների ակտիվության և սոցիալական դերի բարձրացումն է, արդի հասարակական ու տնտեսական գործընթացներին շրջանավարտների գործուն մասնակցության և արդյունավետ գործունեությանը սատարումը, մասնագիտական, հոգևոր և ստեղծագործական զարգացման նպաստումը:

2.2. Իր նպատակների իրականացման համար խորհուրդն ունի հետևյալ առաքելությունը՝

- Մասնակցել ուսումնական գործընթացի բարելավմանը:
- Ուսանողների շրջանում իրականացնել Քոլեջում իրականացվող գործընթացների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում:
- Ներկայացնել և պաշտպանել ուսանողների շահերը Քոլեջի կառավարման և խորհրդակցական մարմիններում:
- Ուսխորհրդում ստեղծել և զարգացնել համապատասխան ներքին կառույցներ:
- Քոլեջի ղեկավար մարմիններին ներկայացնել առաջարկներ ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ:
- Աջակցել Քոլեջում առողջ ապրելակերպի և սպորտի զարգացմանը:
- Կազմակերպել ուսանողական և երիտասարդական տոներին նվիրված միջոցառումներ:
- Մասնակցել ուսումնական, ուսումնադաստիարակչական և ուսանողական գիտական գործունեության աշխատանքներին:
- Ուսանողական կյանքին, ուսումնական գործընթացներին առնչվող հարցերի, նախագծերի մշակում և Քոլեջի ղեկավար մարմիններին ներկայացնում:

-Մշակել և իրականացնել միջոցառումներ ուսանողների իրավունքների պաշտպանության համար:

-Օգտագործել Քոլեջի տեղեկատվական միջոցները՝ ուսանողական կյանքը լուսաբանելու, ինչպես նաև Խորհրդի որոշումներն օպերատիվ կերպով ուսանողությանը հասցնելու համար:

-Կազմակերպել ուսանողական օլիմպիադաներ և այլ միջոցառումներ:

-Մասնակցել կառավարման մարմիններում ուսանողների շահերին առնչվող նորմատիվ ակտերի մշակմանը, կատարելագործմանն ու ընդունմանը:

- Զարգացնել Հայաստանի Հանրապետության ու արտասահմանյան երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների հետ համագործակցության կապերը, աջակցել ուսանողների փոխանակմանը:

3. ՈՒՍԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ուսխորհուրդը ձևավորում է Քոլեջի համապատասխան կուրսերից ներկայացուցիչների ընտրության սկզբունքով: ՈՒսխորհուրդի լիազորությունների ժամկետը 2 տարի է, որի ընթացքում կարող է տեղի ունենալ խորհրդի անդամների մասնակի փոփոխություն (Քոլեջն ավարտելու և նոր ուսանողների ընդունելություն):

3.2. Ուսխորհրդի ղեկավար մարմինը նախագահն է:

3.3. Ուսորհրդի նիստերը.

3.3.1. Ուսխորհրդի նիստերը գումարվում են կիսամյակում առնվազն 2 անգամ: Արտահերթ ժողովներ հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

3.3.2. Ուսխորհրդի նիստերը համարվում են իրավազոր՝ Խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում: Ուսխորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Ուսխորհրդն այդ մասին այլ որոշում չի ընդունում:

3.3.3. Ուսխորհրդը ընդունում և երաշխավորում է իր աշխատանքային պլանը:

3.3.4. Լսում և քննարկում է իր նախագահի և հանձնաժողովների հաշվետվությունները, ինչպես նաև վերջիններիս կողմից ներկայացվող հարցերը:

3.3.5. Քննարկում է այլ հարցեր և ընդունում համապատասխան որոշումներ:

3.3.6. Ընտրում է Ուսխորհրդի նախագահ երկու տարի ժամկետով: Խորհրդի նախագահ կարող է ընտրվել Ուսխորհրդի ի անդամ հանդիսացող յուրաքանչյուր ուսանող:

3.3.7. Ուսխորհրդի նախագահի ընտրությունը կատարվում է Ուսխորհրդի նիստում փակ գաղտնի քվեարկությամբ (եթե այդ մասին այլ որոշում չի կայացվում): Նախագահի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է ուսխորհրդի ներկա անդամների մեծամասնությունը:

3.3.8. Ընտրում է Ուսխորհրդի փոխնախագահ, քարտուղար և հանձնաժողովների նախագահներ:

3.4. Խորհրդի նախագահը

3.4.1. Ղեկավարում և կազմակերպում է Ուսխորհրդի աշխատանքը:

3.4.2. Ներկայացնում Ուսխորհրդը պետական և վարչական մարմիններում, ՀԿ և ՋԼՄ Քոլեջի կանոնակարգի համաձայն:

3.4.3. Ուսխորհրդի հաստատմանն է ներկայացնում Ուսխորհրդի գործունեության պլանը:

3.4.4. Իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ուսխորհրդին և Քոլեջի ղեկավար մարմիններին:

3.4.5. Իր բացակայության ժամանակ նախագահի պարտականություններն իրականացնում է Ուսխորհրդի փոխնախագահը:

3.4.6. Իրականացնում է սույն Կանոնակարգով հաստատված այլ լիազորություններ:

3.4.7. Ուսխորհրդի փոխնախագահի թեկնածուն ընտրվում է Ուսխորհրդի անդամներից, առաջադրվում է նախագահի կողմից, այնուհետև հաստատվում խորհրդի նիստում:

3.4.8. Ուսխորհրդի փոխնախագահը մասնակցում է Ուսխորհրդի աշխատանքների ղեկավարմանը, կոորդինացնում է Ուսխորհրդի աշխատանքները, հետևում է Ուսխորհրդի ընդունած որոշումների կատարմանը, համակարգում է հանձնաժողովների աշխատանքը, կատարում է Ուսխորհրդի նախագահի հանձնարարականները:

3.4.9. Ուսխորհրդի քարտուղարի թեկնածուն ընտրվում է Ուսխորհրդի անդամներից, առաջադրվում է նախագահի կողմից, այնուհետև հաստատվում Ուսխորհրդի կողմից: Ուսխորհրդի քարտուղարը կազմակերպում է ՈՒսխորհրդի գործավարությունը, տնօրինում է արխիվը, կատարում կազմակերպչական աշխատանքներ:

4.ՈՒՍԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Խորհրդի անդամներն իրավունք ունեն.

-Ընտրել և ընտրվել ուսխորհրդի ղեկավար մարմիններում:

-Սույն Կանոնակարգի համաձայն մասնակցել ուսխորհրդի կառավարմանը, ուսխորհրդի կողմից անցկացվող միջոցառումներին:

- Ուսխորհրդի ղեկավար կառույցներին ներկայացնել նրա գործունեության վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ, ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն Ուսխորհրդի աշխատանքի վերաբերյալ:

-Դուրս գալ Ուսխորհրդի կազմից՝ նախագահին ներկայացվող գրավոր դիմումի համաձայն:

4.2. Ուսխորհրդի անդամները պարտավոր են.

-Օժանդակել Ուսխորհրդի հեղինակության ամրապնդմանը, գործունեության ընդարձակմանն ու կատարելագործմանը,

-ակտիվ մասնակցություն ցուցաբերել Ուսխորհրդի կողմից անցկացվող միջոցառումներին, ծրագրերի մշակմանը և նրանց իրականաց մանը:

-Պահպանել սույն կանոնակարգի դրույթները, կատարել Ուսխորհրդի ղեկավար մարմինների որոշումները, ստանձնած պարտականությունները:

-Խուսափել գործողություններից, որոնք կարող են վնասել ուսխորհրդի կամ նրա անդամների շահերին:

4.3 Ուսխորհրդի անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքերում.

- Նախագահի կողմից՝ գլխավոր ժողովներից պարբերաբար բացակայելու:

-Որոշումները չկատարելու, կարգապահական տուժերի և քոլեջի ներքին կարգապահական կանոններում սահմանված ուսանողի պարտականությունները չկատարելու դեպքերում:

- Ուսխորհրդի կողմից անվստահություն հայտնելու դեպքում՝ նույն Ուսխորհրդի գլխավոր ժողովի որոշմամբ:

-Ուսանողական իրավունքները դադարելու պատճառով (հեռացում, տեղափոխում, ուսումնառության ավարտում):

-Քոլեջին բարոյական կամ նյութական վնաս հացնելու դեպքում:

-Իր դիմումի համաձայն:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1. Ուսխորհրդը անվճար օգտվում է Քոլեջի տարածքային, գույքային միջոցներից և նյութատեխնիկական սպասարկումից:

5.2. Նրա ֆինանսական միջոցները գոյանում են Քոլեջի բյուջեից:

5.3 Ուսխորհրդի նյութական և ֆինանսական միջոցները տնօրինում է Ուսխորհրդի նախագահը, որը հաշվետվություն է ներկայացնում Համալսարանի ռեկտորատին:

6. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՄ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում ՈՒսխորհրդի կողմից ընդունվելու և Համալսարանի գիտական խորհրդի վավերացումից հետո:

6.2. Ուսխորհրդի կանոնակարգում լրացումներ կամ փոփոխություններ կարող են կատարվել Ուսխորհրդի կողմից, խորհրդի անդամների 2/3-ի որոշմամբ:

6.3. Ուսխորհրդը կարող է լուծարվել Համալսարանի վերակազմակերպման կամ լուծարման դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

Գիտական քարտուղար՝ Լ.Գ.Այդինյան